1270. ՏԱՊԱՆԱՔԱՐ, քառակուսի, մեծ, հարավային կողին հեծյալ՝ ձեռքին նետ ու աղեղ. ձիու ոտների տակ վիշապ և առջևում եղջերու, սանձից բռնել է մի մարդ. ապա երկլարանի սաղ նվաղող, որի առաջ դրված է բազմալար քանոն. մի մարդ ևս՝ մի ձեռքին էլիթ, մյուսին՝ գավ, իսկ կողքին մեծ գավ, վրան 1 տող.

ԱԾՈՂՈՐՄԱՍՏԱՅԱՆՈՍԻՆ

Ա.Ծ. ՈՂՈՐՄԱ. ՍՏԱՑՓԱՆՈՍԻՆ:

1271. ՏԱՊԱՆԱՔԱՐ, փոքր, նախորդների մոտ. հարավային կողին մի մարդ՝ ձեռքին բռնած խաչ, 4 տող.

ԱՅՍԷՀԱՆԳ
ԻՍՏԱՄ
ԻՐ ՂՈՒԼԻ
ՆՈՂՈՐՄԻ

ԱՑՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԱՄԻՐ ՂՈՒԼԻՆ. ՈՂՈՐՄԻ:

1272. ՏԱՊԱՆԱՔԱՐ, փոքր, նախորդի մոտ. հավանաբար փոքրիկ աղջիկ, բռնել է հայելի. կողքին էլիթ ու դավ, սրանցից վերև և հայելու վրա 4 տող.

ԱՅՍԷՀԱՆԳԻՍՏԱՉԱԲԻՆ

ԱՑՍ Է ՀԱՆԳԻՍՏ ԱՉԱԲԻՆ: ԽՈՍՏՈՒԱՆ:

Ծանոթ. Վերջին բառը չենք հասկանում:

ԶԱԽՐԼՈՒ

Գյուղի հին անունը հայտնի չէ, բայց պահպանված հուշարձանները վկայում են, որ հին բնակավայր է: Գյուղի հին եկեղեցին՝ ս. Բեթղեհեմ, շինված է գյուղի եզրին, ժայռերին կից, մի հորդահոս աղբյուրի վրա, որի ջրերը հոսում են եկեղեցու տակով: Հավանաբար այս աղբյուրը հեթանոսական սրբություն է եղել և հետագայում քրիստոնյա կրոնավորները այդտեղ եկեղեցի շինելով՝ սրբագործել են այն նոր կրոնի ոգով: Եկեղեցու պատին կից կանգնած է մի խաչքար՝ 1292 թվականով, շուրջը 3—4 անարձանագիր տապանաքարեր: Մի այլ խաչքար էլ, մնացած արձանագրությամբ, կանգնեցրած է բնական ժայռերի վրա, գյուղի հարավային եզրին՝ ջրանցքի ձախ ափի մոտ:

Հնում գյուղը տեղավորված է եղել ջրանցքից վեր, դեպի հարավ-արևմուտք լեռան լանջի գոգավորության մեջ. այդտեղ այժմ մնում են տների հիմնապատերը և ընդարձակ գերեզմանատուն՝ շրջապարիսպով: Գերեզմանաքարերն այստեղ շատ հին են (XI—XII դդ.) և անարձանագիր: Պահպանված մի քանի խաչքարերը մեծ ու մոնումենտալ են. ինչպես գյուղատեղը, այնպես էլ գերեզմանատունը խիստ ավերված են:

Հին գյուղատեղի հարավում կա մի բարձր սար, որի գագաթին կանգնած է շատ մեծ, (2,80×1,55), սալքարից շինված խաչքար, քանդակների ոճով վերաբերում է IX—X դարերին: Խաչքարի մոտ, լեռան գագաթին հնում եղել է բերդ, մնում են միայն պարիսպների հիմնապատերը, համեմատաբար լավ են երևում հարավային մասի հիմնապատերը, որոնց հաստությունը հասնում է 3 մետրի:

Մեր ժողովածուում տեղ գտած այս երկու արձանագրությունները հրատարակվում են առաջին անգամ:

1273. ***ԽԱՉՔԱՐ**, կանգնած է ս. Բեթղեհեմ եկեղեցու պատին կից, պատվանդանի վրա. հյուսիսային կողին և խաչի ստորին մասում.*

ԿՄ
ԱՒՆ
Ա̄ՅԵ
ՍՄԻ
Ա Ղ
ԱՏԵ
··Մ
ՈՒՍ ԿԱԿՆԵՑԻ ԶԽԱ
ԻՆԻ ՁՍԻՆՁԵ··ՂԲԱ
Մ Ռ ՐՑԻՄՈ · ԻԹՎՉԽԱ
ՈՒԶ
Ո·ՔԱ
ՐԴԻ
ՄԳ
ԻՍ··

ԿԱՄ|ԱՒՆ| Ա̅Ց̅. Ե|Ս ՄԻ(Ր)|ԱՆՇ|ԱՀ Ե|(ՐԻ) ԱՄ|ՈՒՍ|ԻՆ Ի|Մ Ռ|ՍՒԶ|ՈՒՔԱՆ|, ՈՐ(Դ)Ի| ՍԱՐԳԻՍ(Ի)|, ԿԱՆԿՆԵՑԻ ԶԽԱ|ՉՍ ԻՆՁ Ե(Ր)Ի Ե(Ղ)ԲԱ(Ր)Ց ԻՄՈ(Ց). Ի Թ̅Վ̅. :ՉԽԱ: (1292):

1274. ***ԽԱՉՔԱՐ**, կանգնած բնական ժայռաբեկորի վրա, գտնվում է գյուղի հարավային եզրին, ջրանցքի ափին. շրջանակներին 6 տող.*

ՅԱ✝Ռ	·✝Ա̄ՅԵ
ՍՄԻ	ՐԱ··
ՇԱ	ՅԿԱ
ԵՅԻԽ	ՄԻՐ
ՂԱԵՆՄ	ՄԷՐԻ
ՂԵ:ԻՄՈՅ	ՙՈՂՈՍ

ՅԱՆՈՒ(Ն) Ա̅Ց̅ Ե|Ս ՄԻՐԱ(Ն)|ՇԱՀ ԿԱՆ|(Գ)Ն(Ե)ՑԻ Խ(Ա)ՉՍ| · · ·

Ծանոթ. Ներքևի երեք տողերը խիստ մաշված են և անորոշ։

ՄԻՐԱՆՇԱՀ անվան գոյությունը ապացույց է նախորդին ժամանակակից լինելը՝ XIII *դարի վերջ։*

ՉԱՌՔԵՆԴ (ԱՆՑՅԱԼՈՒՄ՝ ՉԱՐՉԻԲԻՐ)

Գյուղի հին անունն անհայտ է. տեղագիր հեղինակները հիշատակում են գյուղում գտնվող մի եկեղեցու մասին, որի սեղանի մոտ դրված են եղել երկու գեղաքանդակ խաչքարեր՝ մեկն արձանագրությամբ՝ 1514 թ.։ Դեռևս Սմբատյանցի ժամանակ այդ եկեղեցին կիսավեր է եղել, իսկ այժմ՝ չկա, բայց գյուղից մոտ երկու կիլոմետր դեպի հարավ արևելք, ձորի վերին մասում գտնվում են գյուղատեղի ավերակները և նրանց մոտ՝ բլրի վրա գերեզմանատուն, ուր կան տապանաքարեր՝ վարպետորեն քանդակված կենցաղային տեսարաններով և մի քանի գեղաքանդակ խաչքարեր, ամենահինը 1552 թվական (№ 1275)։

Ժողովածուում այստեղի հուշարձաններից ամփոփված վեց արձանագրություններից միայն մեկն է նախկինում հրատարակված եղել և որն այժմ տեղում չկա։